ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1947, № 5 *Общественные науки*

Ս. Բարխուդարյան

ՄԻ ՔԱՆԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԵՎԱՆԻ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ԿՈՒՂՊԱԿ

Կաթողիկեի արձանագրություններից մեկը կարևոր տեղեկություններ է պարունակում Երևան քաղաքի պատմության համար.

ՇՆՈՐՀԻՒՆ ԱՅ ԵՍ ԳԷՇՄԱՐԴՍ ՄԻԱԲԱՆԵՑԱ ԵՐԵՒԱՆՈ ԺԱՄԱՏԵՂԱՑՍ ԵՒ ՏՎԻ ՁԻՄ ՙԲ՚ ԿՈՒՂՊԱԿՆ ՆԵՐՔՆԱՏՆԵՐՈՎՆ ՈՒ ԽՂԵՐՈՎՆ ԵՒ ԱՅԼ ԲԱԶՈՒՄ ԱՐԴԻՒՆՔ ԵՒ ՔԱՀԱՆԱՅՔՍ ՀԱՍՏԱՏԵՑԻՆ Ի ՏԱՐԻՆ ՙԷ՚ ՊԱՏԱՐԱԳ... և այլն[1]

Հնտաքրքիրն այս 1301 թվի արձանագրության մեջ Երևանում նվիրաբերվող կուղպակներն են, այն էլ ներքնատներով և ինչ-որ հարակից շենքերով—խուղերով։

Կուղպակ—կրպակ—խանութ՝ միջնադարում քաղաքային կյանքի ամենաբնորոշ հատկանիշներից մեկն էր, մեր արձանագրությունների մեջ կուղպակների նվիրներ հիշատակվում են միայն քաղաքներում և նրանց շուրջը գտնվող վանքերի արձանագրությունների մեջ. ըստ որում հասկանալի է, որ այս վերջին դեպքում մոտակա քաղաքում գտնվող կուղպակներն են նվիրվում վանքերին։

Հիմնական վայրը, ուր կուղպակների նվերներ են հիշատակվում, Անին է, ապա նրա մոտակա վանքերը՝ Բագնայր, Խծկոնք, Մարմաշեն, Հոռոմոս, Հոռոմայր, Արջո-առիճ, ապա Հաղպատ. սրանցից բացի՝ մի դեպք էլ կա Արճեշում։

Եղած արձանագրությունների բովանդակություններից դժվար չէ հասկանալ, որ նվիրված կուղպակները գտնվում են Անիում. իսկ Արճեշինը պարզորեն ցույց է տալիս, որ կուղպակը քաղաքի վերաբերյալ երևույթ է. 1291 թ. այդ չափազանց կարևոր, մեծ արձանագրության միջի մեզ հետաքրքրող մասում գրված է.

> . . . *Գնեցի արտ մին ես ոչ հեռի յայն արտէն ժ մոթո տեղ և տվի եկեղեցեացս. և տվին ի* ճաղաճ
> տներ և Բ կուղպակ. *և սոքա են աւանդ եկեղեցեացս։*[2]

Նման ոճ հանդիպում է նաև Հաղպատ-Սանահնի արձանագրությունների մեջ, ուր նվիրված կուղպակների համար ասվում է՝ յԱնի։

Այս երևույթը կարող է ապացույց լինել այն բանի, որ Երևանը 13-րդ դարի երկրորդ կեսից սկսած, մոնղոլական արշավանքների առաջին շրջա-

[1] Կ. Ղաֆադարյան—*Երևանի կաթողիկեի և Նորահայտ հուշարձանի վիմական արձանագրությունները. «Տեղեկագիր Պատմության և Գրականության Ինստիտուտի», գիրք* I, *Երևան, 1938 թ.։*

[2] Սարգսյան, *Տեղագրություն, 269,* Կոստանյան, *Վիմական Տարեգիր, 134։*

նից հետո, դառնում է միջնադարյան տիպի քաղաք, վարչա-կրոնական կենտրոն, արհեստավորական և առևտրական ձեռնարկություններով։

Մեր մատենագրության մեջ Երևանն առաջին անգամ հիշատակվում է 7-րդ դարի սկզբին, եկեղեցական ժողովածուների մեջ՝ «Դաւիթ երեց Երևանայ», ապա միայն նույն դարի կեսերին, արաբական արշավանքների կապակցությամբ, Սեբեոսի մոտ։[1]

Գրաբարանակերտցին է միայն (10-րդ դ.), որ Սեբեոսի նկարագրած դեպքերի կրկնության ժամանակ, առաջին անգամ անվանում է «ի գյուղաքաղաքն Երևանի»։

Որ մինչև այդ Երևանը նշանավոր կենտրոն և քաղաքատիպ վայր չի եղել, պարզ երևում է նրանից, որ Բալաձորիի (9-րդ դար) աշխատության մեջ Երևանը հիշատակված չէ։ Հայաստանի նվաճմանը նվիրված գլխում բաղմաթիվ փոքր ի շատե կարևոր վայրերի թվարկման մեջ Երևանն անտես է առնված։ 901 թվականին վերաբերող մի արձանագրության մեջ Սյունյաց Սուփան իշխանը նվիրաբերել է Մաքենացոց վանքին «... հինգ կուղպակ յԱնի և հինգ այգի յԵրևան և հինգ հարիւր առու այգի ի գիւղաքաղաքն Գառնի և երկու այգի յԵղեգիսս»։[2] Ինչպես տեսնում ենք, Գառնին անվանվում է գյուղաքաղաք, իսկ Երևանը՝ ոչ. և նվիրվում է Երևանից այդի։ Երևանից այգիների նվիրաբերություններ հիշատակվում են հնագույնը՝ Սևանի արձանագրության մեջ 874 թ., Հաուհի՝ 1201 թվի, Կեչառիսի՝ 1204, Անիի՝ 1215 թ., 2 անգամ, Օշականում. 1221 թ., Հաուհ՝ 1224 թ. և այլ շատ տեղեր։ Բոլոր դեպքերում, ինչպես տեսնում ենք, նվիրաբերման առարկան այգին է և գա, հարկավ, հատկանշական է Երևանի, որպես գերազանցապես այգեգործական վայրի, համար։ Իսկ 14-րդ դարից ձեռագրերի հիշատակարաններում արդեն Երևանը միշտ որպես գյուղաքաղաք կամ քաղաք է հիշատակվում. օրինակ՝ Այգեկցու 1341 թ. ձեռագրի հիշատակարանում ասվում է.

«... յերկրէն եկի այն Հայաստան
ի քաղաքէն այն պատվական
որ իւր անունն է Երևանայ»։[3]

Իսկ պարսկական տիրապետության շրջանի հիշատակարանների մեջ՝ նույնիսկ մայրաքաղաք. օրինակ՝ 1658 թ. մի ձեռագրի հիշատակարանում՝

«... Գրեալ եղև սա յերկրիս
Արարատեան ի մայրաքաղաքիս
Երեան կոչեցեալ...»։[4]

Տասերորդ դարից դառնալով գյուղաքաղաք, 13-րդ դարի երկրորդ կեսից, երբ տևական պատերազմներից հետո Հայաստանը մտնում է խաղաղ ու շինարարական մի շրջան, Երևանն ևս այս ոլորտի մեջ դառնում է վարչա-քաղաքական կենտրոն, առևտրա-արհեստավորական ձեռնարկություններով, ներքնատներ և խուզեր ունեցող կուղպակներով։ Երևանի առևտրա-արհեստավորական վայր դառնալու խնդրի հետ կապ ունի նաև Երևանի կալվա-

---

[1] Սեբեոսի մոտ Երևանի հիշատակված լինելն այժմ հերքվում է տես «Բառաստերի օրագրից» հոդվածաշարքը («Հանդես ամսօրյա», № № 7—8, 9—10 և 11—12, 1936 թ.)։

[2] Վիմական Տարեգիր, 8. Օրբելյան, ԼԶ. Սիսական, 88.

[3] Շաճագիզ—Հին Երևան, 72.

[4] Անդ, 75.

ծագիր արձանագրության մեջ հանդես եկող պարոն Սահմադինը, Անիի պարոն Ավետենց որդի Սահմադինը, որը 13-րդ դարի երկրորդ կեսից բարձրացող նոր տիպի՝ կալվածատեր ֆեոդալական տան ներկայացուցիչն է և, հավանաբար, քաղաքային պայմանների՝ Անիի ծնունդ ու թաթարական ելդանի մասսալ, կալվածներ է ձեռք բերում Անիից շատ հեռու տարածությունների վրա, այն էլ գնման միջոցով, հատկապես առևտրա-արհեստավորական վայրերում և կամ մեծ ավաններում։ Որ Սահմադինը Անեցի է և 13-րդ դարի քաղաքային տիպի կալվածատեր, պարզ երևում է նրա անունը հիշատակող ամենահին՝ Անիի 1263 թ. հետեյալ արձանագրությունից.

«ԶԺԲ. Ելդանին. շնորհիւն
աստուծոյ մեք տաղմահիքս վասն յերկար
կենդանութեան և վասն պատրոնաց մերոց
Սահիպ դիւանին և Սահմադին և Դարիմագինին
բարձաք ի յԱնո իրիցանուս բաժն...

Այստեղ նա հիշատակվում է որպես Անիի պատրոնների մեկը միայն։

Մրենի 1273 թ. իր արձանագրությամբ նա ազատում է Արջաորիճի, Մրենի և Օշականի այգիները «ի խայալ և յերրորդ հարկէ, որ բնական ազատ էր»։[1]

Մրենի 1277 թ. արձանագրության մեջ նա, թագավորի և հայրապետի (կաթողիկոսի) անունների հիշատակումից հետո հիշվում է «ի պարոնութեան Սահմատինին»։

Մրենի 1284 թվի արձանագրությամբ հանդես է գալիս նրա լրիվ անունը՝ «Սենոպ Սահմատին Աւէտեց որդի», որ գնում է իր հալալ արդիւնքով Մրենը և թողնում հացի տասնակն։[2]

Օշականի 1286 թ. արձանագրությամբ Ստեփաննոս ձեռնավորը և Վահրամ Քեթորարը պարոն Սահմադինի հրամանով թողնում են Օշականի հոգևորականների այդիների և բամբակի բոլոր հարկերը։[3]

Օշականի 1288 թվի արձանագրությամբ, Արղուն դանի ժամանակ պարոն Սահմադինը, որդի պարոն Աւէտեացն, թողնում է Օշականի հացի, դրամանի շարիատն։[4]

Արճեշի 1291 թվի մեծ արձանագրությամբ՝ Սահմադինը հիշատակվում է Քաջբերունիքի տեր և նվիրում է եկեղեցուն բազմաթիվ արտեր, երկուշաբթի օրվա ջուրը «դտիւ և զգիշեր», Մեծոփ գիւղն իր սահմաններով և բազմաթիվ այլ վայրեր։[5]

Օշականի 1295 թվի արձանագրությամբ, արդեն Քեռաղաթու դանի ժամանակ, Սահմադինի թոռը՝ Բեսութան, թողնում է Օշականի «գեղի և վանքերի դէսարա» հարկը։[6]

Սահմագինն այս արձանագրությունների մեջ հանդես է գալիս նախ և առաջ որպես Անի քաղաքում ապրող մի ֆեոդալ, որը կալվածներ ունի

[1] Վիմական Տարեգիր. 106.
[2] Անդ, 116.
[3] Անդ, 126.
[4] Անդ, 129.
[5] Անդ, 130.
[6] Սարգսյան, 269. Վիմական Տարեգիր. 133.
[7] Վիմական Տարեգիր, 137.

Անիից սկսած մինչև Վասպուրական, Մրեն, Օշական, Երևան ու Քաջբերունիք, կալվածների այս ցրվածությունը և նրանց օազիսային բնույթը 13-րդ դարի մեր պատմության շատ կարևոր առանձնահատկություններից է, որն ամենից առաջ պայմանավորվում է նոր, առևտրա-արհեստավորական քաղաքների Երևան դալով, դրամի մեծաքանակ շրջանառությամբ և այդ բոլորը պայմանավորող խոշոր, ընդհանուր արևելյան կայուն պետականության առկայությամբ։

Այս պայմաններում քաղաքային տիպի շահագործման, առևտրից ու արհեստավորական աշխատանքից ստացված եկամուտների կուտակման միջոցով Երևան եկած պարոն Սահմագինը արձանագրությունների մեջ հանդես է գալիս որպես «բարեգործ», ամենուր այս ու այն հարկը վերացնողի դերում։ Որպես նոր տիպի կալվածատեր, նա ոչ միայն հարկերի թեթևացումով է զբաղվում, այլև իր ցաքուցրիվ կալվածներում կայուն օրենքներ է հաստատում, որի ամենափայլուն օրինակն է տալիս Երևանի Կաթողիկեի արձանագրությունը.

«Ի Թ. ՉԺԳ ԱՑ ՈՂՈՐՄՈՒԹԲՆ ՈՒ ԵԼՂԱՆԻՆ
ՈՒԺՈՎՆ ԵՍ ՍԱՀՄԱՏԻՆՍ ՊԱՐՈՆ ԱՒԵՏԵՑ ՈՐԴԻՍ ՉԵՐԵՒԱՆ
ԳՆԵՑԻ ՀՈՂՈՎ ԵՒ ՋՐՈՎ ԵՒ ԻՐԱՒՈՒՆՔ ՉԱՑՍ ԱՐԱՐԻ ՀԱՅՐԵՆԻՔ
ՈՐ ԳՆԱԾ ԵԼԱՆԻ ՈՒ ԳԻՐ ԱՌԱԾ ՎԿԱԱՒՔ ՈՒ ԴԱՀԻԱՔՆ ՏՈՒԱԾ
ԿԱՄ ՀԱՅՐԵՆԻՔ ՈՐ ՓՈԽԱԾ ԼԻՆԻ ՈՒ ՄԻՆ ՏԱՐԻ ԱՆՑԵԼ ԼԻՆԻ
ԱՅԼ ՅԵՏ ՉՀԱՍԱՆԻ ԹԷ ՈՎ ԷՔ ԾՌԷ ԿԱՄ ՄԱՐԴ ՈՐ Ի ԽՍՄՈՒ-
ԹԵ ՎԵՐԱ ԿԱՇԱՌՔ ԱՍԷ ԹԷ ՍՈՒՏ Է ՈՒ ԹԷ ՂՈՐԴ
ՉԿԱՇԱՌՆԱՑՈՂՆ ՏԱՑ ՈՎ ԱՅՍ ԲԱՆԻՍ ՀԱԿԱՌԿԱ ՈՒ ՉԱՅՍ
ԳՐԵԱԼՍ ԽԱՓԱՆԷ ՅԷՐԻՑ ՍԲ ԺՈՂՈՎՈՅՆ ՆՉՈՎԵԼ ԵՂԻՑԻ
ՄԱՄՆ ՉՈՒԴԱՅԻ ԺԱՌԱՆԿԷ ԵՒ ԱՅ ԽՌՈՎՈՒԹԻ ԱՆԿԱՆԻ
ԵՒ ԱՍԵՆ ՅԱՉԳԷ ՆԱԼԱԹ ԻՐԵՆ ՎԵՐԱ»։

Այսպիսով, Սահմագինի այս ակտով Երևանն ընկնում է առևտրա-կալվածատեր «սաղմաջիր» տերերի ձեռքը, որոնց «բարեգործությունը» նոր տիպի շահագործման, քաղաքային դրամական հարաբերությունների արդյունք է. մի հանդամանք, որը հաստատում է Երևանի արդեն ձևավորված քաղաք լինելը։

2. ՀՈՂԻ ԳԻՆԸ

Կաթողիկեի արձանագրություններից մեկ ուրիշը մեծարժեք նյութ է տալիս միջնադարյան Հայաստանի տնտեսական կյանքի ամենակարևոր մի բնագավառի՝ հողի գնի որոշման համար։

Ֆեոդալական հասարակակարգի արտադրական հիմքը գյուղատնտեսությունն է և այդ պայմաններում հողը, որպես արտադրության հիմնական միջոց, ունի եզակի նշանակություն։

Հողի իրական—դրամական գնի որոշումն, ըստ այսմ, մի խոշորագույն լծակ է դառնալու ֆեոդալական Հայաստանի ներքին, տնտեսական կյանքի երևույթների ճանաչման համար։

Կաթողիկեի հյուսիսային պատին դեղեցիկ տառերով գրված է հետևյալ արձանագրությունը.

1. ԿԱՄԱՒ ԲԱՐԵՐԱՐԻՆ ԱՑ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹԲ ՍԲ ՀՈԳՈՅՆ
2. ԵՍ ԳՈՐԳ ՄԵՂՈՒՑԵԱԼ ԾԱՌԱ ԱՑ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ԴԱՒ

3. ԼԱԲ ՄԻԱԲԱՆԵՑԱՔ ԷՐԵԻԱՆՈ ԺԱՄԱՏԵՂԱՑՍ ԵԻ
4. ՏՎԱՔ Ի ՆՈՐԱԳԱՒԻԹ ՁՄԵՐ ՀՈՂՆ ՈՐ Ի ԴԻԻԱԿԱՆ
5. Ն Է ԺԸ ԿԱՊՃԻ ՏԵՂ ԵԻ ՍՊԱՍԱՒՈՐՔՍ ԽՈՍՏԱՑ-
6. ԱՆ Ի ՏԱՐԻՆ ԺԲ ՊԱՏԱՐԱԳ Զ.Ա. ԻՆՁ ԱՌՆԵՆ ԵԻ Զ.Ա.
7. ԴԱՒԼԱԹԻՆ ԿԱՏԱՐԻՁՔՆ ԱՒՐՀՆԻՆ ՅԱՑԸ Ի ՁԿԷ.[1]

Այս առաձանագրության առանձնահատկությունն այն է, որ նվիրաության ընթացքում հիշատակված է նաև հողի չափը։

Մեր վիմական արձանագրությունների մեջ բազմաթիվ անգամներ կապինի հիշատակությունը կա, սակայն նա մեծ մասամբ գործ է ածված որպես ցորենի չափ՝ հարկերի գանձման կամ հարկերը դեղջելու առնչությամբ։ Կաթողիկեի այս արձանագրությունը միակն է, ուր «կապիճ» բառը ստույգ կնրպով գործ է ածված որպես հողի տարածության չափ. իսկ որ մեր նյութի համար ավելի կարևոր է, նվիրված հողի ճիշտ տարածությունն է հիշատակված և ապա գնահատված է այն պատարագներով։

50 կապիճ տեղ հողը, ըստ կաթողիկեի արձանագրության, հավասար է 2 պատարագի։

Մեր արձանագրության ժամանակակից, այն է 12—14-րդ դարերի պատարագների գինը բարեբախտաբար որոշված է՝ միջին գինն է $21^1/_{15}$ դահեկան, ցածրի սահմանը՝ 20 և վերինը՝ 25.[2] արդ՝ պատարագի փոխարեն մեր հավասարության երկրորդ անդամը վերածելով դահեկանի և, պայմանականորեն վերցնելով նրա բարձրագույն չափը, ստանում ենք՝ 50 կապճի տեղ հավասար 50 դահեկանի. տեսնենք այս հարաբերությունը հաստատող այլ փաստեր էլ կան։

Արձանագրական նյութերի մեջ կա երկու դեպք, որոնք այլ կողմով հաստատում են դրված հավասարության ճշտությունը. դրանք են.

1. Դեղարդի գլխավոր հուշարձանից մի քիչ հեռու (պարսպից դուրս) գտնվող կիսավիմափոր ս. Աստվածածին եկեղեցու արևմտյան պատի վրայի հետևյալ արձանագրությունը.

«Ի թուիս ՉՉ ես Զաքարէ սնեալ ի սուրբ Աստուա-
ծածնիս Նորոգեցի Աստուածածինս ի հալալ արդեանց
իմոց և գնեցի դԴեմարիին հողն ։ի։ դահեկանի
և դխաչահայրերն Արթոյի Հասանա ։Խ։ դահեկանի
և ետու ընծայք սուրբ Աստուածածնիս և սպասա-
ւորքս խոստացան ։բ։ աւր ժամ ։ա։ ինձ ։ա։ Մամքանա։»[3]

2 Կոտայքի Ներքին Դալիլեր գյուղի մոտի ավերակ եկեղեցու՝ Ս. Աստվածածնի՝ անթվական հետևյալ արձանագրությունը.

կամաւն Աստուծոյ ես Մեսրոբ
երէց գնեցի դՇատլոյսենց այգոյն
չարէքն գԱնարևին բաժինն ։ի։
գահեկան և ետու սուրբ Աստուածածինս. և

---

[1] Կ. Ղամբարյան—Երևանի կաթողիկեի և Նորահայա հուշարձանի վիմական արձանագրությունները, էջ 178—01։

[2] «Մի քանի դիտողություններ հայ վիմական արձանագրությունների մեջ», «Տեղեկագիր ՀՍՍՀ Գիտությունների և Արվեստի Ինստիտուտի», № 2, էջ 43, Երևան, 1957 թ։

[3] Արձանագրությունը տալիս ենք մեր վերծանությամբ. տես սխալագրությունները՝ Ս. Մինիս., 52. Մանկունի, 80. Վիմ. Տար., 100։

սպասաւորքս եւրուն ․Բ․ պատարագ ի տարոջն, ով
խափանէ իմ մեղացն պարտական...[1]

Այս երկու արձանագրությունների տվյալներն ապացուցում են, որ վաճառվող պատարագների թիվր որոշելու ընթացքում համարժեքի դեր է կատարել ժամանակի դրամական միավորը՝ գահեկանը և այն դեպքերում, երբ «նվիրվող» հողի դրամական գինը որոշ է, անմիջաբար հիշատակվում է։ Գեղարդի մեջ բերված արձանագրությամբ Զաքարեն գնել է երկու հողաբաժին 60 գահեկանով և «նվիրելով» եկեղեցուն, ստացել է փոխարենը 2 պատարագ։ Այստեղ մի քիչ պատարագի նորման բարձր է. տեղում կատարած մեր ստուգումը պարզել է, որ արձանագրության մեջ մինչ այժմ վերծանված Բ պատարագը պետք է Գ պատարագ կարդալ. թիվը ցույց տվող տառը ջարդված է և վերծանողները Բ են համարում, հենվելով արձանագրության վերջում պատարագների բաշխման թվերի վրա՝ ա. ինձ ա. Մամքանա. Նախ՝ տեղում մնացած այդ տառի մնացորդը Գ-ի է նման, և երկրորդ՝ շատ արձանագրություններ կան, ուր պատարագների ընդհանուր թիվը չի համապատասխանում նրանց բաշխման թվերին ե, վերջապես, պատարագների գնի որոշման ընթացքում հիմնական նշանակություն են ունեցել Գեղարդի արձանագրությունները, որոնք կազմել են ուսումնասիրության ենթակա նյութի 60 տոկոսը. և Գեղարդի պատարագագնի միջին թիվը կազմել է նաև ընդհանուրի միջին թիվը, այն է՝ 21[1]/[2] գահեկան. եթե անգամ այս դեպքը մի քիչ բացառություն կազմելու լինի, այն է՝ 30 դահեկան պատարագագին, չի խանգարվում ընդհանուր դրությունը։ Այսպիսով, մեր մեջ բերած 2-րդ արձանագրությունն արդեն լիովին համապատասխանում է նորմային, այն է՝ 20 գահեկան պատարագագին։

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ և՛ ըստ արդեն որոշված պատարագների, և՛ ըստ մեր մեջ բերած արձանագրությունների՝ պատարագագինը 20—25 գահեկան է, և եթե հողի գինը հայտնի է, հիշատակվում է նաև գնված հողի գինը ըստ դահեկանների, որը լիովին հաստատում է պատարագնի ընդհանուր քսան դահեկան գինը։ Այս բոլորը հաստատում են մեր հիմնական թիվը՝ 50 կապիճի տեղ հող. հավասար 2 պատարագ, հավասար է 50 գահեկան. կամ 50 կապճի տեղ հողն արժեր 50 դահեկան 1301 թվին։

3. ԿԱՊԻՃ

Այժմ տեսնենք, թե ինչ ծագում ունի կապիճը և ինչքան տարածություն հող է ներկայացնում։

Կապիճը որպես չափ գործ է ածված հայ մատենագրության ամենահին հիշատակարանների մեջ թե ցամաքեղենի և թե հեղանյութերի համար։ Հնագույն գործածությունը Ս. Գրքի մեջ է։ Մեր թարգմանիչները կապիճը գրել են օտարազգի մի շարք չափերի դիմաց, ինչպես, օրինակ, հունարեն χοῖνιξ (խոյնիք). լատ. Chenix, եբր. զպթ. և այլ ուրիշ բազմաթիվ չափերի փոխարեն։

Բառի ծագման մասին եղել են բազմաթիվ ստուգաբանություններ.

[1] Շահխաթունեանց—Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, Բ հատոր. էջ 179 Էջմիածին. 1842 թ..

այսպես՝ Նոր Հայկազ. բառ. համեմատում է վրացերեն կաբիծի, թուրքերեն գապ, հունարեն κάβος, լատ. cabus բառերի հետ, նույնը և Ավգերյանը։[1]

Հյուբշմանը բառի ծագումն իրանական է համարում, որից առնում է նաև Հայկ. ՍՍՌ ԳԱ-ի իսկական անդամ Հ. Աճառյանը։[2]

Հնագույն պարսկերենում այս բառի գործածությունը, սակայն, չի հանդիպում. բանասերները հիմնվում են մի միջանկյալ աղբյուրի՝ Քսենոֆոնի վրա, որն իր «Անաբասիս»-ում, որպես պարսկական չափ, հիշատակում է՝ «Կապիճ—երկու շինիկ պարունակող չափ ըստ պարսից» («Անաբաս.» 1, 5, 6)։

Կապիճի, որպես չափի, հնագույն գործածությունը մենք գտնում ենք ուրարտական սեպագրությունների մեջ. Սարգուր 2-րդի տարեգրության Սիրիայից տարած ավարացանկի մեջ, ուր թված է բերված ավարի քանակն ու չափը, մեզ հետաքրքրող տողը Մառը հետևյալ կերպ է թարգմանում՝ 202,133 капича хлеба, 111 карасов вина. 7013 мин бронзы և այլն։[3]

Նման թարգմանությամբ մեջ է բերված նաև Մեշչանինովի 2 բառարաններում՝

1. Капише—мера веса.

2. Капише—мера сыпучих тел.[4]

Նույնը և Հայկ. ՍՍՌ ԳԱ իսկական անդամ Գր. Ղափանցյանը՝ Kapise—ցորենի չափ=հայոց «կապիճ» նույնիմաստ բառին։[5]

Բ. Բ. Պիոտրովսկին, հետևելով Lehmann-Haupt-ին, բառի արմատը համարում է kapi, և նույնացնում հայերեն կապիճ-ին։

Այսպիսով, ամենից առաջ պարզվում է այս չափի հնագույն աղբյուրը՝ ուրարտերենը։ Եթե կապինը հին փոքրասիական-արևելյան ընդհանուր և տարածված չափ լիներ, այն դեպքում նա անպայմանորեն գործածված կլիներ ամենից առաջ ասորեստանյան արձանագրությունների մեջ. մինչդեռ ասորեստանյան լեզվի լավագույն բառարաններն ստուգելով՝ մենք չհանդիպեցինք այդ բառին։ Որ հին Արևելքում կային այդպիսի ընդհանուր անուն կրող չափեր, դրա լավագույն ապացույցը հենց վերևում մեջ բերված ուրարտական արձանագրության մեջ հիշված մինա կշռաչափն է, որ ամբողջ Արևելքում տարածված էր մինա, մնաս ձևերով և ուրարտացիների մոտ էլ manae—մանա ձևով էր գործածվում. և մեր մատենագրության մեջ ամենուր գործ է ածված, արդեն գրականացած, մնաս ձևով, և ժողովրդական մանե—ման ձևով. պարսկահայերը մինչև այժմ էլ գինին չափում են ման-ով. ղամարլուեցիները (նախկին պարսկահայեր) մանը գործ են ածում որպես հողի տարածության չափ. օրինակ՝ 20 ման այգի ունեմ և այլն։

---

[1] Բացատրութիւն չափուց և կշռոց նախնեաց. Վենետիկ, 1821, էջ 108։

[2] Հայերեն Արմատական բառարան, Դ հատոր, էջ 990. Hübschmann, Armenische Studien, էջ 165. Leipzig, 1883.

[3] *Марр* и *Орбели*—Археологическ. экспедиция 1916 г. в Ван, էջ 55. արձանագր. VI 10. 11.

[4] *Мещанинов И. И.*—Халдоведение, 236 և Язык Ванск. клинопис. 127.

[5] Գ. Ղափանցյան—Ուրարտուի պատմությունը, 1940, էջ 40 և 55.

[6] *Б. Б. Пиотровский*—История и культура Урарту, Ереван, 1944, էջ 202; Lehmann-Haupt, Armenien, I, 470. II. 2, 447.

Որ պարսիկները պետք է փոխառած լինեն ուրարտացիներից և ոչ ընդհակառակը, դա պարզ է նախ և առաջ նրանից, որ 9-րդ դարից (մեր թվ. ա.), երբ Վանա լճի ավազանում կազմակերպվեց ուրարտական պետականությունը—դասակարգային մի հասարակություն, ուր պետական ընդհանուր կարգերի, մասնավոր սեփականության զարգացման ընթացքում կերպարանք էին ստանում նաև չափերն ու կշիռները—Պարսկաստանը դեռևս գտնվում էր սոցիալական զարգացման ավելի պրիմիտիվ աստիճանի վրա—նա ապրում էր դեռևս տոհմա-ցեղային անջատ միավորներով և բնականաբար. պահանջ չուներ չափ ու կշիռների կայուն նորմաներ մշակելու և, հետևաբար, ուրարտացիները ավելի շուտ իրենք կարող էին ազդել այդ խնդրում Պարսկաստանի վրա։ Այդ հեշտ կերպով կարող էր տեղի ունենալ, ընդհանուր կուլտուրական փոխադրեցությունից բացի, նաև քաղաքական այն վիճակով, որին ենթարկված էր Պարսկաստանը, կամ, ավելի ճիշտ՝ Պարսուան։ Պարսուան, 9-րդ դարից սկսած, դառնում է ասորեստանցիների և ուրարտացիների միջև կռվախնձոր դարձած ցեղախմբերից մեկը և՝ հաճախ նվաճվում ու ենթարկվում է ուրարտացիներիս։

Մենք չգիտենք, իհարկե, թե ուրարտացիներն ինչպես էին հնչում այդ բառը, բայց եթե անդամ կապիճ ձևով արտասանեին, դրել չէին կարող, որովհետև իրենց տառերը վերցրել էին ասորեստանցիներից, որոնք ն տառ չունեին. վրացերենում կաբիծի և լազերենում կապիծի, հայերենում կապիճ և այլ ժողովուրդների մոտ գաֆիզ ձևերն ապացուցում են, որ ուրարտացիներն էլ իրենց դրությունից այլ կերպ էին արտասանում և, հավանաբար, կապիչ ձևով, որը հարավային Վրաստանում նույնը մնալով՝ հյուսիսային Վրաստանում վեր կածվեր կաբիծի ձևին։

4. ԿԱՊԻՃԻ ՉԱՓԸ

Կապիճի չափի որոշման խնդիրը դժվար է. բացի նրանից, որ կապիճը հայ մատենագրության մեջ բազմաթիվ թարգմանելիք չափերի տեղ է գործածվել, կա նաև այն հանգամանքը, որ նույն անունը կրող չափերը դարերի ընթացքում փոփոխության էին ենթարկվում և տարբեր վայրերում տարբեր տարողություն ունենում—մի հանգամանք, որ հատուկ էր ֆեոդալական միջնադարին։

Կապիճի վերաբերյալ հենց սկզբից երևում է, որ նա մեծ տարողություն չի ունեցել. Սարգուրը, ինչպես տեսանք, իր ավարացանկի մեջ հիշատակել է 202.133 կապիճ հաց (ցորեն)։ Իհարկե, այսպիսի ահռելի թիվ ցորենը 8-րդ դարում (մ. թ. ա.) միայն փոքր չափով կարելի է բացատրել։ Վերլուծելով միջնադարյան չափերն ու կշիռները, մեր ուսուցիչ՝ հարգելի ակադ. Հ. Մանանդյանն իրավացիորեն ժխտելով կապիճի նույնացումը կարոսին,[1] կապիճի չափը համեմատում է պարսկական քեֆիզեի հետ։

«... Տելմահարցու gephize-ն կարելի է համապատասխան ընդունել հելլենիստական-հռոմեական խոյնիքսին, այսինքն՝ գրիվի $^1/_8$-ին։ Հնարավոր է, սակայն, և ոչ պակաս հավանական, որ քեֆիզեն, լինելով պարսկական սիստեմի չափ (եմմտ. հայեր. և պեր. կապիճը), կարող էր նաև հավասար

[1] Հ. Մանանդյան—Կշիռները և չափերը հնագույն հայ աղբյուրներում, Երևան, 1930, էջ 69.

յինել, ինչպես ենթադրել է Պ. Դրյագարդը. գրիվի $^{1}/_{10}$-ին» (*ընդգծումները մերն են։— Ս. Բ.*)։

Քեֆիզեի կշռորդը կլինի, ուրեմն՝ կամ 9,792 : 8—1 կիլ. 22'4 գր. և կամ 9,792 : 10 = 979 $^{1}/_{2}$ գր.»[1]

Այս հաշվով կապիճը համարելով քեֆիզեն ու գրիվի $^{1}/_{10}$-ը և հաշիվների դյուրության համար վերցնելով լրիվ 980 գրամ, կաթողիկեի 50 կապիճի տեղ հողը, ուրեմն, հավասար կլինի 980×50 49.000 գրամ = 49 կիլոգրամ ցորեն ցանվող հողատեղ։

Ամբերդի մեր հավաքած արձանագրությունները, որոնցից մեկի մեջ Վահրամ Պահլավունին 1026 թվին իր նորակառույց՝ Ամբերդի եկեղեցու համար սահմանած տուրքերի շարքում հիշատակում է նաև՝ «տուն Բ կապիճ ցորեն յԱրագածոտն». իսկ մի այլ, անթվակիր, հավանաբար 12—13-րդ դարի արձանագրության մեջ, գրված նույն եկեղեցու արևմտյան մուտքի բարավորի վրա, ոմն Մխիթար ասում է. «Թողի տունն կէս կապիճ հաց»։ Այս արձանագրությունները, հատկապես երկրորդը, ցույց են տալիս, որ դժվար թե կապիճն այդ դարերում հավասար լիներ 980 գրամի, այլապես տունը կես կապիճ, այն է՝ 490 գրամ ցորենի տուրք զիջելու մասին այդպիսի մի կարևոր վայրում հազիվ թե արձանագրական հիշատակություն գրվեր։

Մյուս կողմից էլ, սակայն, միայն զեղչված տուրքերի քչության հիման վրա անհնարին է պնդել կապիճի՝ ավելի մեծ չափ լինելու մասին։ Ցորենի արժեքն ու գինը շատ ավելի փոփոխական կատեգորիա է, քան չափը և հողի գինը, և շատ մեծ կախում ունի տվյալ ժամանակի քաղաքական ու տնտեսական կյանքից։ Աղբյուրների մեջ մենք ունենք տեղեկություններ գների թռիչքային երևույթների մասին։ Որպես օրինակ մենք մեջ կբերենք Նորերս ձեռք բերված մի ավետարանի 1413 թվի հիշատակարանից հետևյալ քաղվածքը.

Ցանուն այ ես Մարտիրոս Աբրահամու որդի. Թադէոս քհանայրս եղբաւրորդի. յորժամ վաղճանեցաւ հաւրեղբայրն իմ Թադէոս քհայն. ես Մարտիրոս զնորայ աւետարանս ծախեցի Յակոբ քահանային ․Ռ․ ԴԿՆ (դահեկան). գնին առի մին կով ու մին եզն. ու մատաղ արարի Թադէոս քահանային. Ով ոք որ յայսմհետէ դաւի առնէ այս աւետարանիս կամ յիմ ազգէ կամ յաւտարաց. ՅԺԸ հայրապետացն անիծած եղիցի…[2]

Դրամական ճիշտ գինը որոշելու խնդիրը ներկայումս նույնպես խիստ դժվար է, որովհետև դրամագիտության մեջ շատ տարբեր չափեր ու գներ գոյություն ունեն դահեկանի վերաբերյալ. բացի դրանից, դահեկանի կշռաչափն անգամ ճիշտ որոշելու դեպքում նրա իրական արժեքը դեռ չի որոշվում, որովհետև արծաթի արտադրության բարձրացումով նրա արժեքային միավորն ընկել է։ Ֆ. Էնգելսն այդ մասին ունի սպառիչ համեմատություն։ Ըստ Էնգելսի՝ ոսկու և արծաթի միջնադարյան 1 առ 10 համե-

---

[1] Նույն տեղում, էջ 90։

[2] Սույն ձեռագիր ավետարանը Շահապ գյուղի եկեղեցուց փոխադրեց Հայկ. Պետ. Թանգարանի աշխատակից ընկ. Հ. Եղիազարյանը և հանձնեց Պետական Ձեռագրատանը։

մատությունը 19-րդ դարի վերջին տասնամյակում արդեն փոխվել էր և հավասար էր 1 առ 22։[1]

Թողներով դահեկանի հիշտ կշռաչափի և գրամական իրական արժեքի որոշումը, այնուամենայնիվ, ըստ կաթողիկեի նորաբաց արձանագրության, մենք կարող ենք հողի գնի վերաբերյալ 1301 թվի համար հետևյալ հասատուն հարաբերությունը սահմանել՝ 50 կապեի տեղ հողամասն արժե 2 դասարաց, արժե 50 դահեկան կամ՝ 50 կապեի տեղ հող հավասար 50 դահեկան։ Հողի գնի վերաբերյալ այս ստույգ հավասարությունը մեծ նշանակություն ունի ոչ միայն Երևանի պատմության համար, այլև Հայաստանի պատմության ընդհանրապես, որովհետև Արարատյան դաշտի համար ստացվող այս գինը կարող է իրավամբ, փոքր տատանումներով ընդունվել ֆեոդալական Հայաստանի 13—14-րդ դարերի համար որպես հողի միջին ընդհանուր գին։

[1] Ֆ. Էնգելբի ծանոթ. Մարքսի «Կապիտալ» 4-րդ հրատարակության, I, 168։